# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 14

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Համայնքի 2018 թ-ի I եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը հաստատելու մասին:

/զեկուցող Հ. Ղազարյան/

2. Համայնքում նոր կառուցվող, վերակառուցվող, վերանորոգվող շենքերի և շինությունների տանիքների գունային լուծումները սահմանելու մասին:

/զեկուցող Հ. Ղազարյան/

3. Համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին:

/զեկուցող Հ. Ղազարյան/

4. <<ՀԵՔԻԱԹ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2018 թ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/զեկուցող Հ. Ղազարյան/

5. ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը՝ ծավալը, պայմանները և իրականացման կարգը հաստատելու մասին:

/զեկուցող Հ. Ղազարյան/

6. Համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/զեկուցող Հ. Ղազարյան/

7. Հողատարածքները վարձակալությամբ տրամադրելու մասին:

/զեկուցող Հ. Ղազարյան/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 15-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ-Ի I ԵՌԱՄՍԿԱՅԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1.1 կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի 2018 թ-ի I եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը համաձայն թիվ 1 և 2 հավելվածների /կցվում է 2 էջ/:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՂԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 1
ՀՀԱրարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու
11.04.2018 թ. թիվ 15-Ա որոշումից

Եղեգնավան համայնքի 2018թ. բյուջեի առաջին առամսյակի
եկամուտների կատարողականը աճողական տեսքով

| Եկամտատեսակ | Տարվա ճշտված պլան (հազ.դրամ) | Ամսվա պլանը աճողական տեսքով (հազ.դրամ) | Ամսվա կատարողականը աճողական տեսքով (հազ.դրամ) | Փաստացին պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ.ԱՆՁ. | 100.00 | 24.00 | 31.50 | 131.25% |
| ՀՈՂԻ ՀԱՐԿ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ | 9,000.00 | 2,250.00 | 2,181.10 | 96.94% |
| ՀՈՂԻ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ | 63.40 | 15.00 | 0.00 | 0.00% |
| ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ | 2,000.00 | 498.00 | 778.80 | 156.39% |
| Ա)Հ.ՏԱՐ-ՈՒՄ ՆՈՐ ՇԵՆՔԵՐԻ,ՇԻՆ.(+ՈՉ ՀԻՄՆ.)ՇԻՆԱՐ-ԹՅՈՒՆ (ՏՂԴՐՄ.) ԹՒՏՎ. ՀԱՄԱՐ | 20.00 | 3.00 | 15.00 | 500.00% |
| ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ | 208.00 | 51.00 | 104.00 | 203.92% |
| ՊԵՏ.Բ-ԻՑ ՖԻՆ. ՀԱՄԱՀԱՐԹ. ՍԿԶԲ-ՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎ. ԴՈՏԱՑ-ՆԵՐ | 31,465.00 | 7,866.00 | 7,864.20 | 99.98% |
| ՀԱՄ. ՍԵՓ. ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ | 3,000.00 | 750.00 | 312.11 | 41.61% |
| ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ | 1,400.00 | 348.00 | 262.50 | 75.43% |
| ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐ | 4,200.00 | 1,050.00 | 868.10 | 82.68% |
| ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ/ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿ ԳԱՆՁ ԾՆՈՂ ՎՃԱՐ | 1,000.00 | 0.00 | 0.00 | 0.00% |
| ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ | 0.00 | 0.00 | 51.00 | 0.00% |
| ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 0.00 | 0.00 | 2,362.20 | 0.00% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 52,456.40 | 12,855.00 | 14,830.51 | 115.37% |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵՂԻԳԱՐՈՎԱ

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու

**11.04.2018 թ. Թիվ 15-Ա որոշման**

## 2018թ. Առաջին եռամսյակի ծախսերի կատարողականը աճողական տեսքով

| Ծախսատեսակ / Հիմնարկ | Տարվա պլանը (հազ.դրամ) | Ամսվա պլանը (հազ.դրամ) | Փաստացի ծախսը (հազ.դրամ) | Ծախսը պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| Աղբահանություն | 1400.0 | 500.0 | 245.760 | 49.15% |
| Բարձրագույն կրթություն | 200.00 | 100.00 | 0.00 | 0.00% |
| Գույքի նկատմամբ իրավունք | 200.00 | 70.00 | 33.750 | 48.21% |
| Կառավարման մարմ պահպանում | 19453.20 | 5557.20 | 3326.094 | 59.85% |
| Հանգիստ,մշակույթ,կրոն | 6320.00 | 2900.00 | 1221.00 | 42.10% |
| Հասարակական կազմակերպություն | 100.0 | 100.0 | 50.0 | 50.00% |
| Նախադպրոցական կրթություն | 9228.00 | 1750.00 | 372.00 | 21.26% |
| Ջրային կառույց շահագ. և պահպանում | 3650.00 | 1085.00 | 479567.77 | 44.20% |
| Սոց.պաշտպան.անապահով ընտանիքներին | 2500.00 | 700.00 | 570.00 | 81.43% |
| Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ | 7555.20 | 7555.20 | 0.00 | 0.00% |
| Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում | 900.00 | 200.00 | 0.00 | 0.00% |
| Ֆոնդային .բյուջեի պահուստային ֆոնդ | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00% |
| Ասֆալտ -բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում | 400.0 | 200.00 | 200.00 | 100.00% |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություն | 700.00 | 300.00 | 73.90 | 24.63% |
| Կանաչ տարածքների հիմնում և պահպանում | 300.00 | 300.00 | 300.00 | 100.00% |
| Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում | 1200.00 | 700.00 | 0.00 | 0.00% |
| Հանգստի և սպորտի գոտեւ պահպանում | 3160.80 | 3160.80 | 0.00 | 0.00% |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 57267.20 | 25178.20 | 6872071.77 | 27.29% |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵՂԻԳԱՐՈՎԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 16-Ա

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. N 1275-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29)-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Եղեգնավան համայնքի տանիքների հետևյալ գույները /Բնական և արհեստական կղմինդր, մետաղեթիթեղ, պրոֆիլ, պրոֆնաստիլ , այլ/

| | |
|---|---|
| RGS-234-107-50 | RGB-212-166-84 |
| RAL - 2010 | RAL-1002 |

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 17-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1,1 կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 72-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան գյուղական համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 23.04.2014թ-ի թիվ 17-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 18-Ա

### <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-Ի 2018 Թ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Կրթության և գիտության նախարարի 16.11.2017 թ. N 1318-Ն հրամանով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-ի 2018 թ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի /կցվում է 1 էջ/:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 11.12.2017 թ. N 17 որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու
11.04.2018 թ-ի թիվ 18-Ա որոշման

<<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-Ի 2018 թ-ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11 /տասնմեկ/
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ |
|---|---|---|
| Մանկապարտեզի տնօրեն | 1 | 135.000 |
| Մանկապարտեզի հաշվապահ | 1 | 85.000 |
| Մանկապարտեզի դաստիարակ | 1 | 115.000 |
| Մանկապարտեզի դաստիարակ | 1 | 115.000 |
| Դաստիարակի օգնական | 1 | 85.000 |
| Դաստիարակի օգնական | 1 | 79.000 |
| Մանկապարտեզի խոհարար | 1 | 79.000 |
| Երաժշտության դաստիարակ | 0.5 | 115.000 |
| Տնտեսվար - լվացարար | 1 | 79.000 |
| Հավաքարար | 0.5 | 85.000 |
| Օժանդակ բանվոր | 0.5 | 85.000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 19-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Սահմանել Եղեգնավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը՝ ծավալը պայմանները և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Եղեգնավան համայնքի ավագանու
11.04.2018 թ. թիվ 19-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ՝ ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով /այսուհետ՝ կարգ/ սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը՝ ծավալը պայմանները և իրականացման կարգը՝ Եղեգնավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները /այսուհետ՝ պարտադիր բարեկարգում/:

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Եղեգնավան համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները նաև կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Եղեգնավան համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) ոչ բնակելի նշանակության տարածքների /այսուհետ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շինությունների և կառույցների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) հանգստի գոտիում և ընդհանուր օգտագործման այլ տարածքների օբյեկտների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) խանութների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը,

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի „Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին,, N 596-Ն որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,

3) բնական քարե շարվածքով իրականացված շինությունների ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Եղեգնավանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան՝ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո:

10. Եղեգնավանի համայնքապետարանի համապատասխան մասնագետի կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը,

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ խճապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել սիզամարգերում կամ ճամփեզրին,

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12. Եղեգնավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

16. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների, առևտուր իրականացնող այլ օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասը,

2) առանձնատների համար՝ հողամասի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասը,

3) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասը,

4) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-3-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Աշխատակազմի քարտուղար՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 20-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
Անշարժ գույքի օտարումից մուտքերը ավելացնել 2362.2 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 2362.2 հազ.դրամ:
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
Հանգստի և սպորտի գոտու պահպանում և կառավարում / բաժին-8, խումբ-1, դաս-1, ծրագիր- 52/
Շենքերի և շինությունների կառուցում՝ 5112 հոդվածը ավելացնել 2362.2 հազ.դրամով, ճշտված պլանը 5223.0 հազ.դրամ:
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Կառավարման մարմնի պահպանում /բաժին-1, խումբ-1, դաս-1, ծրագիր- 51/
Ընթացիկ նորոգում՝ 4251 հոդվածը ավելացնել 100.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 300.0 հազ.դրամ
Նախադպրոցական կրթություն /բաժին-9, խումբ-1, դաս-1, ծրագիր- 51/
Այլ ընթացիկ դրամաշնորհներ՝ 4639 հոդվածը ավելացնել 350.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 9328.0 հազ.դրամ
Հատկացումները կատարել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, ճշտված պլանը սահմանել 7105.2 հազ.դրամ.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 21-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող՝ 03-041-0111-0001 ծածկագրի 25,25 հա, 03-041-0109-0001 ծածկագրի 23,25 հա., 03-041-0105-0001 ծածկագրի 0,8 հա., 03-041-0108-0001 ծածկագրի 1,68 հա., 03-041-0107-0001 ծածկագրի 1,47 հա. գյուղատնտեսական այլ հողատեսքերը տրամադրել համայնքի բնակիչներին վարձակալության որպես արոտավայր:

2. Վարձավճարի չափը յուրաքանչյուր տարվա համար սահմանել 1 հա-ը 4000 դրամ:

3. Վարձակալական պայմանագրերը կնքել յուրաքանչյուր տարվա համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՂԵԼԱ
2. ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ
4. ԵՓՐԵՄՅԱՆ ՍԵՐՈԲ
5. ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ